18. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՃԳՆԱՎՈՐԸ

Ժամանակով մե ճգնավոր կապրիր մե մաղարիմ մեջ քառսուն տարի։

Օրերեն մե օր քաղքի չոբանը իրեն օխչարը կտանի էդ մաղարի քովը արծրցընելու։ Մեկ էլ կը տեսնի օր մաղարեցեն էդ ճգնավորը դուս էկավ։ Էդ վախտը իրան օխչարը «հավատամ» բռնած կայնավ ճգնավորի առաջ։ Չոբանը զարմանք մնաց, թե էս ի՞նչ բան է.— էսքան տարի ես չոբան եմ էղե, ըսման բան չենք տեսե, օր օխչարը «հավատամ» բռնե։

Մեկ էլ ճգնավորը կանչեց չոբնին, հարցրավ, թե՝ էս ո՞ւմ օխչարն է։

Չոբանն ըսավ.— Թագավորի օխչարն է։

— Լավ,— ըսավ, ճգնավորը,—իրիկունը գուքաս իմ քովը, ես քեզի բանըմ կուսամ, տանիս ձեր թագավորին։

Իրկունն օր մութը վրա էկավ, չորանը էկավ ճգնավորի քովը։

Ճգնավորը աղլուղի մեջ գունդրմ կրակ դրած տվեց էնոր, ըսավ.— Կուտաս թագավորին։

Չոբանը վերցուց կրակը, օխչարը քշեց ու բերեց քաղաք։ Օխչարը տեղավորցուց, էկավ թագավորի պալատը։ Թագավորին օխտը տեղով թամալա էղավ, ութ դիանդա ձեռք բռնեց կայնավ։

Թագավորն ըսավ.— Հը՛, չոբան, ի՞նչ կա։

— Թագավորն ապրած կենա,— ըսավ չոբանը,— էսօր ես իմ

օխշարը տարա մաղարի սարը։ Ճգնավորը ընձի տեսավ, կանչեց. կրակը աղլուղով տվավ ընձի ու ըսավ. «Տար քու թագավորին փեշ-քեշ իմ կողմենս։ Ահա՛ն կրակը։

Թագավորը մտածեց, ըսավ.—Սապախտանը օր կէրթաս էդ թարաֆը, ես ճգնավորին մի հատ փեշքեշ կուտամ առ տար։

Էքսի օրը սապախտան կանուխ շորանը էկավ թագավորի քով, էլի թամալա էղավ, առավ էդ աղլուղով լիքը ջուրը։

Ըսավ.— Ջորա՛ն, ճգնավորին կըսես օր քու կրակն էս ջուրը կը մարե։

Ճգնավորն օր առավ, զարմանք մնաց։ Ըսավ.— Ջորա՛ն, օր կէրթաս քաղաք, թագավորին կըսես օր սապախտան քաղքի մեջ հեչ մե կնիկ մարթմ չէրևա, օր ես պըտի գամ իրեն տեսնիմ։

— Լավ,— ըսավ շորանը ու գնաց։

Էկավ տուն, օխշարը նես էրավ գոմը, գնաց թագավորի քով, թամալա էղավ ու ըսավ.— Թագավոր ապրած կենաս, ճգնավորն ըսավ օր. «Սապախտան գուքամ իրան քով, թող հրամայե օր դուռը հեչ մե կնիկ մարթըմ չէրևա»։

— Լավ,— ըսավ, թագավորն ու հրամայեց, օր առավոտը հեչ մե կնիկ-մարթըմ չէրևա քաղքին մեջ։ Հետև մտածեց, ըսավ.—Տեսնինք, էդ մարթն օր քառասուն տարի ճգնել է, ի՞նչ է իմացե։

Հրամայեց օր էրկու խոշոր գերան տանին քցեն ճգնավորի ճամփի վրա։ Լծել տվեց ամմեն մի գերանի ծերին մեկ-մեկ ջուխտ եզ ու ըսավ.— Թող քաշեն ամմենը իրան թարաֆ։

Էդտեղ էս կողմ բերել տվեց մե մարթ, մե մեծ լեռ քարըմ ու մեշոքըմ էլ կաղին և ըսավ.— Օր ճգնավորը գուքա, կաղինը մեկ-մեկ կը վերցնես, կը զարկես լեռ քարին, տեսնենք ճգնավորն ի՞նչ կըսե։

Ընդրանից էս կողմ էլի մե հատ ջաղաչ շինեց ու ամբարը ցորեն լցեց, ալրի ամբարի տեղը բաց թողեց, ըսավ ջաղացպանին.— Օր ճգնավորը գուքա, ջաղաչը կը բանցուս, թող աղա, ջուրը ալուրը տանի. տեսնենք ի՞նչ կըսե։

Ճգնավորն էկավ, դեմ առավ գերըններուն ու եզներուն։ Ըսավ.— էդ ընչի՞ թարս ու շրջոնք կը քաշեք, լծեք էրկու ջուխտն էլ մե գլոխ, օր քաշեք տանեք։

Ըսին.— Թագավորի հրաման է։

Էդտեղ անցավ։ Էկավ դեմ առավ մարթուն ու կաղինին։ Տեսավ օր մարթը վերցնե կաղինն ու կը զարկե էդ խոշոր քարին, օր քարը ջարթե։ Ըսավ.— էդ ընչի՞ քարը ջարթելու համար կաղինը կը զարկես. հազըր չաքուճ վերու ու զարկ քարին։

Ըսավ.— Թագավորի հրաման է։

Էդտից անցավ. էկավ դեմ առավ ջաղչին։ Տեսավ օր ջաղաչը կաղա, ալուրը ջուրը կը տանի։ Ըսավ.— Ձեր քաղքի մեջ քյասիբ-աղքատ չկա՞, օր ալուրը թոփ էնեք տաք էնոնց։

Ըսավ.— Թագավորի հրամանն էս է։

Էկավ հասավ թագավորին։ Թագավորն հարցրավ, ըսավ.— Դու օր էկար, ճամփեն քեզի ի՞նչ ըռաստ էկավ։

Ճգնավորը հրմմեն տեսածները պատմեց։

Ըսավ.— Դու ի՞նչ հասկըցար էդ բաներեն։

Ըսավ.— Ես ըսի օր եզները հարցրկեք, մե գլխեն մեկել գըլխուն լծեք, օր քաշեն տանեն։ Ընդից հետ էն մարթուն ըսի՝ կաղինը քարին չի ջարթե, առ չաքուճը, զարկ քարին։ Էդտից էկա ջաղաչ, ըսի՝ ամբար դրեք, ալուրն թոփ էրեք, տվեք քյասիբ-աղքատներին։

— Է՞դ է քու թավշուրմեն,— ըսավ թագավորը։

— Էդ է,— ըսավ ճգնավորը։

Ըսավ.— Չէ՛, դու չես հասկըցե։ Հիմի գու լսե, ես թավշուրմեն տամ։ Էն եզներն օր կան, էտի տան միաբանութունն է. թե օր մե տան մեջ «իմ» ու «քու» էղավ, գործը առաջ չի էրթա։

Էս կողմն օր տեսար էն մարթը, էտի հասկըցող ու չասկըցող մարթու մասին է։ Թե օր մարթը չասկըցող էղնի, էդ լեռ քարին նման է, ինչքան դուզես զարկ կաղինով, էնիկ չի հասկընա։ Էն ջաղաչն օր տեսար, ամբարն ու քարը տղամարթն է. էնիկ կաշխատի տուն կը բերե, հրմը կնիկը ալրրի ամբարն է, թե օր ալուրը թոփ չէնե, մարթու աշխատանքը ջուրը կը տանի։

Ճգնավորը դլոխը կախեց ու մտածեց, օր քառսուն տարի ճգնել է, քառսուն էլ ճգնե, էլի բան չի ավելցնե։